

«ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ



ՀՆԳԱՄՅԱ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

(2017-2022թթ.)



**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2017-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

1. «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի 2017-2022 թվականների ռազմավարական ծրագիրը մշակվել և ընդունվել է՝ հիմք ընդունելով «Գավառի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության 2016-2021 թվականների ռազմավարական ծրագիրը: Նոր ռազմավարական ծրագրի ընդունումը պայմանավորված է Համալսարանի կազմակերպա-իրավական ձևի փոփոխության հետ:
2. Ռազմավարական ծրագիրը մշակելիս՝ հաշվի է առնվել այն փաստը, որ «Գավառի պետական համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ ԳՊՀ, Համալսարան կամ Բուհ)՝ որպես «Գավառի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդ, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում գործող միակ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունն է, որն ունի կրթական, գիտահետազոտական, դաստիարակչական, ինչպես նաև սոցիալական, ժողովրդագրական, տնտեսական, մշակութային կարևոր գործառույթներ:

1. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ Է

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի առանձնահատկությունների հաշվառմամբ՝ բնական, հումանիտար և հասարակական գիտությունների տարբեր ուղղություններով բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի որակյալ իրականացումը, աշխատաշուկայի պահանջների հաշվառմամբ բակալավրի և մագիստրոսի որակավորմամբ մրցունակ մասնագետների պատրաստումը, ուսումնամեթոդական, գիտահետազոտական, դաստիարակչական, սոցիալ-մշակութային գործառույթների, արտաքին համագործակցության ծրագրերի պատշաճ իրականացումը,
2. գործատու սուբյեկտի պարտականությունների բարելիիղճ կատարումը, դասախոսների ու վարչատնտեսական աշխատակիցների, ինչպես նաև ուսանողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

2. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ

1. ԳՊՀ 2017-2022 թվականների հնգամյա ռազմավարական ծրագիրը (այսուհետ՝ ՌԾ) նախատեսում է Համալսարանի գործունեության հետևյալ առաջնահերթությունները.

- 1) ուսումնական գործընթացի որակի բարելավում,
- 2) կրթության և գիտահետազոտության ինտեգրում,
- 3) կրթական միջավայրի արդիականացում,
- 4) ուսանողների հետ աշխատանքների արդյունավետության բարձրացում,
- 5) վարչարարության և մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի բարեփոխում,

- 6) Ֆինանսական գործունեության և ներբուհական տնտեսության կազմակերպման ճկուն կառուցակարգերի կիրառում,
 - 7) արտաքին կապերի և համագործակցության ընդլայնում,
 - 8) համալսարանի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության բարձրացում, հանրությանը որակյալ ծառայությունների մատուցում,
 - 9) համալսարանում ակադեմիական ազնիվ միջավայրի պահպանում, հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի արդյունավետ իրականացում:
2. Նշված առաջնահերթություններից ելնելով՝ ԳՊՀ ՌԾ-ն սահմանում է Բուհի գործունեության գերակա ուղղություններին համապատասխանող ռազմավարական նպատակները և նախանշում դրանց իրականացման համար լուծման ենթակա խնդիրները:

3. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՍԼԱԿԱՆՆ Է /ՀԵՌԱՊԱՏԿԵՐԸ/

1. Որակի մշակույթի արմատավորումը ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսուցման բոլոր ձևերով բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման, ուսանողակենտրոն կրթական միջավայրի ձևավորման, ուսուցման արդյունավետ մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման, կրթական վերջնարդյունքների ձեռքբերման, ուսուցման և գիտահետազոտական գործունեության զուգակցման, ուսանողների համակողմանի դաստիարակության ապահովման, մասնագիտական գործունեությանը նախապատրաստման, ինչպես նաև համալսարանական գործունեության այլ ոլորտներում:

2. Եռաստիճան կրթական համակարգի աստիճանական ներդրումը:

3. ՀՀ Գեղարքունիքի մարզի ազգաբնակչության տարբեր շերտերի կրթական կարիքների բացահայտումը և դրանց համապատասխան լրացուցիչ կրթական ծառայությունների նոր ցանկի առաջարկումը:

4. Գիտահետազոտական ծրագրերի իրականացումը, կրթության և գիտահետազոտական գործունեության փոխկապակցումը:

5. Համալսարանի միջազգայնացումը:

6. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային զարգացմանը նպաստումը:

4. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ԵՆ.

Համալսարանն իր գործունեության բոլոր ոլորտներում առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով.

- 1) օրինականություն,
- 2) ժողովրդավարություն,
- 3) մարդու և քաղաքացու՝ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու իրավունքի ապահովում,
- 4) բարձրագույն կրթության մատչելիություն,
- 5) կրթական գործընթացի և վարչարարության հրապարակայնություն, թափանցիկություն,
- 6) սովորողների, դասախոսների ու այլ աշխատակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն,

- 7) Համալսարանի կոլեգիալ և միանձնյա ղեկավարման կառուցակարգերի զուգակցում,
- 8) ուսանողական ինքնակառավարման խթանում,
- 9) Համալսարանի ինքնավարություն և հաշվետվողականություն,
- 10) ակադեմիական ազնվության և բարեվարքության ապահովում,
- 11) կրթության, գիտության և դաստիարակության զուգակցում,
- 12) կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետության ապահովում:

**5. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2017-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ
ՀԱՍՏԱՏՈՂ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐՆ ԵՆ**

1. Համալսարանի ՌԾ-ն հաստատում է ԳՊՀ կոլեգիալ կառավարման մարմինը՝ հոգաբարձուների խորհուրդը:

2. Համալսարանի ՌԾ-ն իրականացնում են.
 - 1) ԳՊՀ գիտական խորհուրդը,
 - 2) ռեկտորը,
 - 3) ֆակուլտետները,
 - 4) ամբիոնները,
 - 5) ուսանողական ինքնակառավարման մարմինները,
 - 6) ակադեմիական քաղաքականության վարչությունը,
 - 7) որակի ապահովման բաժինը,
 - 8) կադրերի կառավարման հարցերով զբաղվող բաժինը,
 - 9) հաշվապահությունը,
 - 10) արտաքին կապերի և լրատվության բաժինը,
 - 11) Համալսարանի մյուս կառուցվածքային ստորաբաժանումները:

**6. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝
ԸՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

6.1. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ռազմավարական նպատակը՝

Վերջնարդյունքահեն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացում, դրանց համապատասխանեցում աշխատաշուկայի արդի պահանջներին, Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին, ուսանողների կրթական կարիքներին, գիտության նորագույն նվաճումներին:

Խնդիրները՝

1. Բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերի /այսուհետ՝ ՄԿԾ/ արդիականացում, դրանցում ամրագրված իրազեկությունների՝ գիտելիքների, կարողությունների և հմտությունների համապատասխանեցում Որակավորումների ազգային և

Ոլորտային շրջանակների նույն մակարդակների իրագեկություններին, գործատուների պահանջներին:

2. Աշխատաշուկայում բարձր պահանջարկ ունեցող մասնագիտությունների ցանկի ճշգրտում, նոր մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակում և իրականացում:

3. Սահմանված կարգով երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի, լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացում:

4. Իրականացվող ՄԿԾ-ների համար նոր մեթոդաբանությամբ մասնագրերի մշակում, վերջնարդյունքներով պայմանավորված ուսուցման, ուսումնառության և գնահատման մեթոդների կիրառում, դրանց համապատասխանեցում /քարտեզագրում/:

5. Ուսուցման բոլոր ձևերով իրականացվող ՄԿԾ-ների դասընթացներին, ուսումնական այլ մոդուլներին կրեդիտների հատկացման և դրանց հաշվարկման նոր մեթոդաբանության մշակում, կրեդիտային համակարգի բոլոր բաղադրիչների հետևողական կիրառում ուսումնական գործընթացում, դրանց արդյունավետության բարձրացում:

6. Ամփոփիչ ատեստավորման գործընթացի կատարելագործում, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի գնահատման հստակ չափանիշների սահմանում՝ նորարարական, հետազոտական, ստեղծագործական, վերլուծական և տեխնիկական բաղադրիչների համար, սովորողների կողմից ձեռքբերված կրթական վերջնարդյունքների և ՄԿԾ-ներում պլանավորված վերջնարդյունքների համապատասխանության օբյեկտիվ գնահատում, եզրահանգումների կատարում:

7. Կրթության որակի մշտադիտարկման նոր մեթոդների և գործիքակազմի կիրառում, դրանց արդյունքների, վերլուծությունների հրապարակում, շահակիցների ներգրավմամբ որակի ապահովման կառուցակարգերի հստակեցում և ամբողջականացում՝ Համալսարանում իրականացվող բոլոր գործընթացների որակը գնահատելու և դրա շարունակական բարելավման ընթացքն ապահովելու նպատակով:

6.2. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ռազմավարական նպատակը՝

Գիտահետազոտական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջավայրի ապահովում, միասնական հետազոտական հայեցակարգի մշակում և իրականացում, կրթական և գիտահետազոտական գործընթացների ինտեգրում:

Խնդիրները՝

1. Բնական, հումանիտար և հասարակական գիտությունների համապատասխան ոլորտներում Համալսարանի գիտահետազոտական գործունեության զարգացման նպատակով միասնական ռազմավարական մոտեցման /հայեցակարգային հիմքի/ մշակում:

2. Համալսարանի գիտական գործունեության կառավարման հստակ քաղաքականության, գիտահետազոտական գործունեության հայեցակարգի, ընթացակարգերի մշակում և կիրառում, գիտահետազոտական աշխատանքների ուղղորդված և արդյունավետ կազմակերպում, դրանք ՀՀ Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթություններին համապատասխանեցում:

3. Գիտահետազոտական և ուսումնական գործընթացների ինտեգրում, ուսանող-դասախոս համատեղ գիտահետազոտական գործունեությունը խրախուսող կառուցակարգերի մշակում և գործարկում:

4. Գիտահետազոտական գործունեության ոլորտում համագործակցային կապերի ընդլայնում հանրապետական և արտերկրի առաջատար գիտահետազոտական ինստիտուտների, համալսարանների, ձեռնարկությունների, գործարար համայնքի այլ կառույցների հետ, ինչպես նաև միջազգային հետազոտական նոր նախագծերին մասնակցություն:

5. Որակյալ ասպիրանտական կրթության համար անհրաժեշտ ակադեմիական, հետազոտական, մեթոդական, նյութատեխնիկական արդիական միջավայրի ապահովում:

6.3. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

Ռազմավարական նպատակը՝

Որակյալ ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ ռեսուրսների, արդյունավետ կրթական միջավայրի ապահովում, կրթական նոր տեխնոլոգիաների ներդրում, տեղեկատվական տեխնոլոգիաների լայնորեն կիրառում, ուսումնական, հետազոտական լաբորիատորիաների նյութատեխնիկական հագեցում, կրթական միջավայրից ուսանողների բավարարվածության աստիճանի բարձրացում:

Խնդիրները՝

1. ԳՊՀ կրթական միջավայրի վերաբերյալ շահառուների շրջանում հարցումների պարբերաբար անցկացում, կարիքների բացահայտում և թերությունների շտկում, գրավիչ ակադեմիական միջավայրի ստեղծում:

2. Համալսարանի գործունեությունը կարգավորող ներբուհական փաստաթղթերի և բարձրագույն կրթության ոլորտը կարգավորող ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության որոշումների, ՀՀ կրթության և գիտության նախարարության գերատեսչական և այլ ակտերի համապատասխանության ապահովում:

3. Բուհի՝ որպես միացյալ տեղեկատվական տարածքի զարգացում, տեղեկատվական արդի տեխնոլոգիաներով հագեցած լսարանների ստեղծում բոլոր մասնաշենքերում:

4. Համալսարանի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության և գործավարության համակարգի կատարելագործում:

5. ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման համակարգի («E.Learning.GSU.am») բարելավում, բաղադրիչների ավելացում, արդիականացում:

6. Բուհի էլեկտրոնային գրադարանի («E.Library.GSU.am») շարունակական համալրում, այլ գիտակրթական հաստատությունների էլեկտրոնային գրադարանների, համացանցային գիտական, տեղեկատվական աղբյուրների հետ ուսանողների և դասախոսների աշխատանքի ապահովում:

7. ԳՊՀ ուսանողական համակազմի և պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի տվյալների էլեկտրոնային բազայի կատարելագործում, դասախոսների և ուսանողների էլեկտրոնային հաղորդակցության ապահովում:

8. Դասընթացներին ուսանողների գրանցման, գիտելիքների ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ ստուգման ու գնահատման արդյունքների հաշվառման, ակադեմիական տեղեկատվության կառավարման էլեկտրոնային համակարգի մշակում և ներդրում:

6.4. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ռազմավարական նպատակը՝

Ուսանողների շրջանում գիտելիքների արժևորում, ուսման նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ձևավորում, այն գիտակցության արմատավորում, որ կրթամակարդակը բարձր կենսամակարդակի ապահովման, սոցիալական կարգավիճակի ձեռքբերման և կյանքի որակի երաշխավորման անհրաժեշտ գործոն է:

Խնդիրները՝

1. Ուսանողներին խոր մասնագիտական գիտելիքների հաղորդում, համապատասխան ոլորտների տեսական և գործնական իմացության ապահովում, ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու, շարունակական կրթության մշակույթի արմատավորում:

2. Ուսանողների լեզվական գրագիտության ապահովում, օտար լեզուներով հաղորդակցման, այլալեզու գիտական, տեղեկատվական ռեսուրսների օգտագործման հնարավորության ընձեռում:

3. Ուսանողների համակարգչային և ընդհանուր տեխնիկական գրագիտության ապահովում, էլեկտրոնային ուսուցման («E.Learning.GSU.am») համակարգից և էլեկտրոնային գրադարանից («E.Library.GSU.am»), այլ ուսումնական, տեղեկատվական ռեսուրսներից արդյունավետ օգտվելու հմտությունների զարգացում:

4. Մովորողների հաղորդակցման և կազմակերպական ունակությունների զարգացում, շարունակական կրթության միջոցով անընդհատ ինքնակատարելագործման և ինքնաիրացման մշակույթի արմատավորում:

5. Ուսանողական ինքնակառավարման մարմինների՝ ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության գործունեության ակտիվացում, Համալսարանի կառավարման գործընթացում նրանց ակտիվ դերակատարության ապահովում:

6. Ակտիվ քաղաքացիական դիրքորոշում ունեցող, ազգային և համամարդկային արժեքներ կրող հայրենասեր քաղաքացիների դաստիարակում, նրանց բարոյականային հատկանիշների զարգացում, ուսանողների շրջանում պատշաճ իրավագիտակցության և իրավական մշակույթի ձևավորում:

6.5. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ռազմավարական նպատակը՝

Համալսարանի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացում, վարչարարության միջոցների ու մեթոդների բարելավում, ճկուն կառուցակարգերի և գործիքների կիրառում, մարդկային ռեսուրսների ռազմավարական պլանավորում,

աշխատակազմի նպատակային հավաքագրում և կարողությունների շարունակական զարգացում:

Խնդիրները՝

1. Համալսարանի կառավարման հստակության, ճկունության և, միաժամանակ, կանխատեսելիության ապահովում, օրինականության, ակադեմիական ազնվության և սոցիալական արդարության սկզբունքների անշեղ պահպանում, որոշումների մասնակցային կայացում և կոլեկտիվ իրականացում:

2. Բուհի կառուցվածքային ստորաբաժանումների միջև լիազորությունների, գործառույթների ու պատասխանատվության ճիշտ բաշխում, գործունեության հստակ ուղղորդում, ներդաշնակ և համագործակցված աշխատանքի ապահովում:

3. Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվողականության կառուցակարգերի կատարելագործում և գործունեության արդյունքների գնահատման նոր մեթոդների ու գործիքների կիրառում:

4. Մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետ քաղաքականության իրականացում, որակյալ դասախոսական կազմի և վարչական աշխատակազմի կայունության պահպանում:

5. Մարդկային ռեսուրսների ռազմավարական պլանավորում, աշխատակազմի նպատակային հավաքագրում, ընտրության կազմակերպում, մասնագիտական աջակցման ծրագրերի իրականացում, հստակ ուղղորդում, կատարողական արդյունքների ստուգման և գնահատման կառուցակարգերի կիրառում, աշխատակիցների ծառայողական առաջխաղացման պլանավորում, փոխհատուցման և պարգևատրման համակարգերի կիրառում, աշխատանքային հարաբերությունների իրավական հստակ կարգավորում:

6. Համալսարանի բոլոր տարակարգերի աշխատակիցների պաշտոնների անձնագրերի կամ աշխատանքի նկարագրերի մշակում, հաստատում և կիրառում:

7. Երիտասարդ դասախոսների մասնագիտական աճի խրախուսում, նրանց գիտահետազոտական աշխատանքների մեջ ընդգրկում:

8. Միջազգային և հանրապետական գիտաժողովներին գիտամանկավարժական կազմի անդամների մասնակցության, միջազգային գրախոսվող գիտական պարբերականներում հետազոտությունների արդյունքների հրապարակման խրախուսում:

9. Դասախոսների աշխատանքի, գիտահետազոտական գործունեության և դասավանդման որակի գնահատման նոր կառուցակարգերի մշակում և կիրառում, դասախոսների վարկանիշային գնահատման արդյունքներով պայմանավորված՝ տարբերակված վարձատրության համակարգի մշակում և աստիճանական գործարկում:

6.6. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Ռազմավարական նպատակը՝

ԳՊՀ ֆինանսական ռեսուրսների արդյունավետ և խնայողաբար օգտագործում, Համալսարանի ֆինանսական կայունության ապահովում, ներբուհական տնտեսության անխափան գործունեության կազմակերպում, համալսարանական տնտեսության զարգացում:

Խնդիրները՝

1. Համալսարանի ֆինանսական ռեսուրսների կառավարման արդյունավետ քաղաքականության մշակում և իրականացում:
2. ԳՊՀ զարգացման ծրագրերի ֆինանսական ճիշտ պլանավորում և Համալսարանի տարեկան բյուջեում ներառում:
3. Բուհի ֆինանսական կայունության ապահովում՝ ֆինանսական հոսքերի ճշգրիտ պլանավորման և եկամուտների արդյունավետ օգտագործման միջոցով:
4. Բազմախողովակ ֆինանսավորման կառուցակարգերի կիրառում, բարերարների հնարավորությունների օգտագործում, նպատակային աշխատանք միջազգային կառույցների, դրամաշնորհատու կազմակերպությունների հետ:
5. Համալսարանի եկամուտների, բարեփրական հատկացումների և այլ աղբյուրների հաշվին սոցիալապես անապահով ուսանողների ուսման վարձավճարների զեղչում, սովորողների նյութական և բարոյական խրախուսում:
6. Համալսարանի բարեխիղճ աշխատակիցների բարոյական և նյութական խրախուսում ԳՊՀ բյուջեի, ինչպես նաև Համալսարանի արհեստակցական միության միջոցների հաշվին:
7. Համալսարանի առկա նյութատեխնիկական բազայի պահպանում և ընդլայնում, լաբորատոր բազայի, ուսումնական տարածքի, տեխնիկական բազայի վերազինում, Համալսարանի գույքի նպատակային և խելամիտ տնօրինում, խնայողաբար օգտագործում:
8. Համալսարանի ուսումնական ռեսուրսների, ուսումնաարտադրական պրակտիկայի բազայի ընդլայնում, գրադարանային-տեղեկատվական ռեսուրսների համալրում, արդի տեխնոլոգիական միջավայրի ձևավորում:
9. Համալսարանի կենսաապահովման գործառնությունների պատշաճ իրականացում, ուսանողների ուսման և դասախոսների ակտիվ մանկավարժական ու գիտահետազոտական գործունեության համար պայմանների ապահովում, որակյալ կրթական և աշխատանքային միջավայրի ստեղծում:
10. Բուհի ֆինանսական, նյութատեխնիկական միջոցների կառավարման, ներբուհական տնտեսության կազմակերպման, գնումների կատարման կառուցակարգերի, էլեկտրոնային հաշվապահության գործող ծրագրի կատարելագործում:

6.7. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ռազմավարական նպատակը՝

Համալսարանի արտաքին կապերի և համագործակցության ընդլայնում, արդյունավետ և նպատակաուղղված աշխատանքների կազմակերպում գործատուների և գործընկեր կազմակերպությունների՝ ՀՀ պետական ու ոչ պետական կառույցների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավորապես, Գեղարքունիքի մարզպետարանի, համայնքապետարանների, տարբեր կազմակերպատիրավական ձև ունեցող սուբյեկտների, միջազգային կառույցների հետ:

Խնդիրները՝

1. ՀՀ կրթական և գիտահետազոտական մարմինների ու կազմակերպությունների, Գիտությունների ազգային ակադեմիայի գիտահետազոտական ինստիտուտների, Կրթության ազգային ինստիտուտի, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի, Որակավորումների փոխձանաչման և այլ կառույցների հետ ակտիվ համագործակցություն:

2. Համագործակցություն Հայաստանի Հանրապետության և զարգացած պետությունների առաջատար բուհերի, այլ կրթական, գիտական հաստատությունների, դաստիարակչական, մշակութային ուղղվածության կազմակերպությունների հետ:

3. Համանման կրթական ծրագրեր իրականացնող բուհերի հենանիշային ուսումնասիրություն, արդյունքների վերլուծություն, համադրում և առաջավոր փորձի կիրառում /բենչմարքինգի իրականացում/, Համալսարանի ինտեգրում եվրոպական գիտակրթական տարածք, միջազգայնացում:

4. Համալսարանի կրթական ծառայությունների պատշաճ ներկայացում և գովազդում՝ զանգվածային լրատվության միջոցների և համացանցի միջոցով, հանրությանը հավաստի տեղեկատվության մատուցում:

5. Հանրության հետ Համալսարանի կապերի ակտիվացում, մարզի համայնքապետարանների հետ գործընկերային հարաբերությունների ստեղծում:

6. «Համալսարան-դպրոցներ» բազմաբնույթ համագործակցության ապահովում, գործընկեր դպրոցների ցանկի ընդլայնում, մանկավարժական խորհուրդների, մասնագիտական մեթոդիավորումների հետ գործընկերային հարաբերությունների հաստատում:

6.8. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Ռազմավարական նպատակը՝

Համալսարանի հանրային պատասխանատվության բարձրացում, սոցիալական տարբեր շերտերի կրթական կարիքների բավարարմանն ուղղված միջոցների ձեռնարկում, հանրությանը որակյալ ծառայությունների մատուցում, Բուհի նկատմամբ հանրային վստահության ապահովում, Համալսարանի բարի համբավի ամրապնդում:

Խնդիրները՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզում հանրության տարբեր շերտերի կրթական կարիքների ուսումնասիրում, դրանց համապատասխան լրացուցիչ և շարունակական կրթական ծրագրերի առաջարկում:

2. Համալսարանի աշխատակիցների և սովորողների սոցիալական կարիքների հետազոտություն և հնարավորության սահմաններում օժանդակության ցուցաբերում:

3. Աշխատավարձերի աստիճանական բարձրացում, աշխատակիցների պարզևատրումների, նյութական և բարոյական խրախուսման այլ ձևերի կիրառում:

4. Ներառական կրթական միջավայրի ստեղծում, հաշմանդամություն ունեցող անձանց համար բարձրագույն կրթության մատչելիության ապահովում:

5. Համալսարանի ներքին շահառուների իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն, գործընկերների հետ արդյունավետ համագործակցության ապահովում:

**6.9. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ
ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ**

Ռազմավարական նպատակը՝

Համալսարանի 2017-2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի իրականացում, ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթների և էթիկայի կանոնների պահպանում, բարեվարքության կանոնների արմատավորում, Բուհում ակադեմիական ազնիվ միջավայրի ապահովում:

Խնդիրները՝

1. ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի հիման վրա Համալսարանի գործունեության բոլոր ոլորտներում կոռուպցիայի ցանկացած դրսևորման բացառում, հակակոռուպցիոն միջավայրի պահպանում:

2. ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթների և Բուհի էթիկայի կանոնների պահպանում, Համալսարանի ներքին և արտաքին շահառուների հետ հարաբերություններում բարեվարքության սկզբունքների ապահովում:

3. ԳՊՀ-ում ծագած վեճերը քննող հանձնաժողովի հստակ գործունեության ապահովում, հանձնաժողովի կողմից ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթների և Բուհի էթիկայի կանոնների խախտումների քննում և օբյեկտիվ որոշումների կայացում, համապատասխան պատասխանատվության միջոցների կիրառում:

4. ՀՀ Գեղարքունիքի մարզում հակակոռուպցիոն գործունեության ծավալում, մարզի ազգաբնակչության իրավագիտակցության և իրավական մշակույթի բարձրացմանը միտված ծրագրերի իրականացում: